ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 3-92

«10» դեկտեմբերի 2014 թ.

ՀՀ Շիրակի մարզ, գ. Հայկավան

հեռ. /0312/ 6-00-04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ֆ.ՑՈՒԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու հերթական նիստի թիվ 24,25-Ն,26,27,28,29-Ն,30,31-Ն և 32 որոշումները՝ կայացած 2014 թվականի դեկտեմբերի 4-ին :

Առդիր՝ 18 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս. Մխոյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 05800879

ՇԻՐԱԿԻ ... ՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴ... ԲԱԺԻՆ
Մուտք 10579-12
10. 12 2014

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 24

«4» դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱՐ ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1253- Ն որոշմամբ , համաձայն Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանի և Հայկավան գյուղական համայքի՝ ի դեմս համայնքի ղեկավար Սամվել Մխոյանի, միջև 2014 թվականի նոյեմբերի 19-ին կնքված կապիտալ սուբվենցիայի հատկացման N 118 պայմանագրի դրույթների և ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով Հայկավանի համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պահուստային ֆոնդի « Կապիտալ սուբվենցիաներ համայնքերին» հոդվածով հատկացված 1487.0 հազար (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար ) դրամը օգտագործել բանկցային ընթացակարգի կիրառման պայմաններով Շիրակի մարզի Հայկավանի համայնքի մանկապարտեզի համար խոհանոցային գույք ձեռք բերելու նպատակով :

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ ------------------- կողմ

Սպարտակ Եդոյան՝------------------- կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝---------------- կողմ

Սամվել Բաղդասարյան՝--------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս.Մխոյան

«4» դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ   ԳՅՈՒՂԱԿԱՆ  ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ  N 25- Ն

« 4» դեկտեմբերի  2014 թվական                                                          գյուղ Հայկավան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ  ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ  ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ  ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՈՒՄԸ  ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի,  <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի     72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է `

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 26-Ն որոշումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4                    Դեմ՝ 0                    Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ -------------------- կողմ

Սպարտակ Եդոյան՝------------------- կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝----------------- կողմ

Սամվել Բաղդասարյան՝--------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ `                                        Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի  2014 թվական                                        գյուղ Հայկավան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային

չափերս ընդլայնող այլ կառույցներ (այդ թվում ստորգետնյա) ոստաաքով օբյեկտը ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝վեց հազար երկու հարյուր հիսուն դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ վեց հազար երկու հարյուր հիսուն դրամ.

5.Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երեսուն հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երկու հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ հինգ հարյուր դրամ .

3) մեկ շաբաթվա համար՝ մեկ հազար դրամ .

4) սեկ ասսկա ռասար որսգ ռազար դրաս .

5) մեկ տարվա համար՝ տասը հազար դրամ :

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար ՝հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ութսուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հազար դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական

պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել` երկու հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել`երկու հազար դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել` հինգ հարյուր դրամ:

4. Աղբահանության վճարը սահմանվում է`

1) կենցաղային աղբի համար`

ա. ըստ հաշվառված անձանց քանակի` համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար` ամսական հիսուն դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի` մեկ քառակուսի մետր մակերեսի համար` տասը դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար`

ա. ըստ ծավալի` մեկ խորանարդ մետր աղբի համար` մեկ հազար 1000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի` մեկ տոննա աղբի համար` երեք հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական գյուղ Հայկավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 26

«4» դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 27 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ղեկավարի 2015 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 37.88 %-ի չափով՝ 250.0 հազար(երկու հարյուր հիսուն հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ղեկավարի 2014 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին» թիվ 27 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4 — Դեմ՝ 0 — Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ ------------------- կողմ

Սպարտակ Եդոյան՝------------------- կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝--------------- կողմ

Սամվել Բաղդասարյան՝--------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս.Մխոյան

«4» դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 27

«4» դեկտեմբերի 2014 թվական

գյուղ Հայկավան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 28 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 11 (տասնմեկ) :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 28 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ ------------------ կողմ

Սպարտակ Եդոյան՝------------------ կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝------------------ կողմ

Սամվել Բաղդասարյան՝--------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական

գյուղ Հայկավան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հայկավանի համայնքի ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 4-ի թիվ 27 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հայեցողական պաշտոններ | | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 135000 | 54.00 | 1 | 135000 | 135000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 145000 | 58.00 | 1 | 145000 | 145000 |
| 3 | Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ | 1 | 136000 | 54.40 | 1 | 136000 | 136000 |
| 4 | Առաջատար մասնագետ | 1 | 135000 | 54.00 | 1 | 135000 | 135000 |
| 5 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 90000 | 36.00 | 1 | 90000 | 90000 |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | | |
| 6 | Գրադարանավար | 1 | 80000 | 32.00 | 1 | 80000 | 80000 |
| 7 | Պահակ | 1 | 66138 | 26.46 | 1 | 66138 | 66138 |
| 8 | Պահակ | 1 | 66138 | 26.46 | 1 | 66138 | 66138 |
| 9 | Հավաքարար | 1 | 66138 | 26.46 | 1 | 66138 | 66138 |
| 10 | Վարորդ | 1 | 66138 | 26.46 | 1 | 66138 | 66138 |
| 11 | Ակումբավար | 1 | 66138 | 26.46 | 1 | 66138 | 66138 |
| Ընդամենը | | 11 | 1051690 | - | 11 | 1051690 | 1051690 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական

գյուղ Հայկավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 28

« 4 » դեկտեմբերի 2014 թվական                                        գյուղ Հայկավան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

**որոշում է `**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը `համաձայն հավելվածի

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4          Դեմ՝ 0          Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ -------------------- կողմ

Սպարտակ Եդոյան՝-------------------- կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝----------------- կողմ

Սամվել Բաղդասարյան՝-----------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ `          Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական                                        գյուղ Հայկավան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 28 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման

| Հ/հ | Գույքի անվանումը | Տարեթիվը | Քանակը | Հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ) | Տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հացի պահեստ | 1987 | 2 | 269650 | վթարային |
| 2. | Հորթանոց | 1987 | - | 97530 | վթարային |
| 3. | Մշակույթի տուն | 1970 | - | 645960 | վթարային |
| 4. | Նավես | 1982 | - | 4800 | վթարային |
| 5. | Բիլիարդ | - | - | - | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 6. | Գրասեղան | - | 2 | 1200 | բավարար |
| 7. | Գրականության գիրք | - | 5692 | 120000 | բավարար |
| 8. | Աթոռ (փափուկ) | - | 5 | 2000 | բավարար |
| 9. | Ընթերցասեղան | - | 3 | 5000 | բավարար |
| 10. | Գրասեղան | - | 5 | 21147 | բավարար |
| 11. | Գրապահարան | - | 1 | 11535 | բավարար |
| 12. | Մետաղյա պահարան | - | 6 | 75439 | բավարար |
| 13. | Բազմոց | - | 1 | 16918 | բավարար |
| 14. | Փոքր պահարան | - | 1 | 11150 | բավարար |
| 15. | Կախիչ | - | 1 | 6844 | բավարար |
| 16. | Հեռախոս «Ալտայ» | - | 1 | 34989 | անսարք |
| 17. | Սիլոսի հոր | - | 1 | 66595 | վթարային |
| 18. | Կոլտնտեսության գրասենյակ, ավտոտնակ | 1988 | 12 | | վթարային |
| 19. | Տրակտոր թրթուրավոր ԴՉ-42 | 1988 | | 104200 | անսարք |
| 20. | Տրակտոր ԴՏ-75 | 1987 | - | 42218 | անսարք |
| 21. | Տրակտոր ՏՑ-70 | 1990 | - | 228700 | անսարք |
| 22 | Տրակտոր ՄՏՉ-50 | 1985 | - | 60751 | անսարք |
| 23. | Տրակտոր ՄՏՉ- 82 | 1988 | - | 152493 | անսարք |
| 24. | Տրակտոր Տ -25 | 1988 | - | 53292 | անսարք |
| 25. | Տրակտոր ՄՏՉ-80 | 1989 | - | 189328 | անսարք |
| 26. | Տրակտոր ՄՏՉ-82 | 1989 | - | 189328 | անսարք |
| 27. | Կոմբայն հաց. ՍԿ-5 | 1987 | - | 22916 | անսարք |
| 28. | Կոմբայն հաց. ՍԿ-5 | 1986 | - | 24377 | անսարք |
| 29. | Կոմբայն « Նիվա» | 1989 | - | 146495 | անսարք |
| 30. | Կոմբայն « Նիվա» | 1990 | - | 167104 | անսարք |
| 31. | Խոտհնձիչ Ե -281 | 1989 | - | 297603 | անսարք |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 32. | Գութան | | 1987 | - | 11920 | անսարք |
| 33. | Գութան | | 1985 | - | 8459 | անսարք |
| 34. | Գութան | | 1989 | - | 27684 | անսարք |
| 35. | Կուլտիվատոր | | 1987 | - | 23070 | անսարք |
| 36. | Կուլտիվատոր | | 1988 | - | 30760 | անսարք |
| 37. | Կուլտիվատոր | | 1989 | - | 34913 | անսարք |
| 38. | Շարքացան ԿՈՄ | | 1989 | - | 26915 | անսարք |
| 39. | Շարքացան ՍԶՈՒ 3.6 | | 1991 | - | 14226 | անսարք |
| 40. | Շարքացան ՍՕ 4.2 | | 1991 | - | 14380 | անսարք |
| 41. | Պրես պոդբորշիկ | | 1987 | - | 8997 | անսարք |
| 42. | Պրես պոդբորշիկ | | 1990 | - | 27607 | անսարք |
| 43. | Ժատկա ԺՌԲ-427 | | 1991 | - | 8228 | անսարք |
| 44. | Բրդի հակավորող | | 1986 | - | 7075 | անսարք |
| 45. | Հաց մաքրող ՍՄ- 4 | | 1987 | - | 8459 | անսարք |
| 46. | Գազ 53- Ա | | 1978 | - | 25223 | անսարք |
| 47. | Գազ 52-04 | | 1979 | - | 17841 | անսարք |
| 48. | ՄՄԶ 45021 | | 1989 | - | 34912 | անսարք |
| 49. | Գազ 52-04 | | 1980 | - | 17918 | անսարք |
| 50. | Գազ 53 | | 1982 | - | 20609 | անսարք |
| 51. | Գազ 52 | | 1985 | - | 17995 | անսարք |
| 52. | ՍԱԶ-3507 | | 1985 | - | 34912 | անսարք |
| 53. | Գազ 52 | | 1986 | - | 18840 | անսարք |
| 54. | Գազ 53 | | 1987 | - | 38835 | անսարք |
| 55. | Գազ 53 | | 1988 | - | 59982 | անսարք |
| 56. | Ցիստերն ԱՍՄՊ 37 | | 1989 | - | 142188 | սարքին |
| 57. | Ավտոբուս ԿԿԶ | | 1985 | - | 46370 | անսարք |
| 58. | Ռաֆ | | 1989 | - | 182000 | սարքին |
| 59. | Ուազ | | 1989 | - | 72978 | անսարք |
| 60. | Վազ 2121 «Նիվա» | | 1981 | - | 22500 | անսարք |
| 61. | Վազ- 21213«Նիվա» | | 1997 | 1 | 1800000 | սարքին |
| 62. | Տրակտորի կցորդ | | 1987 | - | 11150 | անսարք |
| 63. | Տրակտորի կցորդ | | 1988 | - | 31529 | անսարք |
| 64. | Տրակտորի կցորդ | | 1987 | - | 39219 | անսարք |
| 65. | Տրակտորի կցորդ | | 1989 | - | 53830 | անսարք |
| 66. | Մանկապարտեզի նոր շենք | | 1992 | - | նվիրատվություն | անավարտ |
| 67. | Մանկապարտեզի շենք քարային | | 1990 | - | նվիրատվություն | հիմնանորոգված |
| 68. | Գրքերի պահարան | | - | 5 | 1430 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 69. | Խաղալիքների պահարան | | - | 5 | 1050 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 70. | Մանկական աթոռ | | - | 62 | 217 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 71. | Մահճակալ | | - | 89 | 2492 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 72. | Խոհանոցային սեղան | | - | 6 | 110 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 73. | Զգեստապահարան | | - | 10 | 1250 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 74. | Երկտեղանոց աթոռ | | - | 6 | 102 | օգտագործմանհամար ոչ պիտանի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 75. | Հարմարեցված պահարան | - | 4 | 480 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 76. | Չորս տեղանոց սեղան | - | 14 | 244 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 77. | Դաստիարակի սեղան | - | 2 | 380 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 78. | Մուտքի նստարան | - | 6 | 99 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 79. | Խոհանոցի սեղան | - | 2 | 110 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 80. | Սրբիչների կախիչ | - | 8 | 224 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 81. | Սեղան | - | 2 | 108 | օգտագործմանհամար ոչ պիտանի |
| 82. | Համակարգիչ | 2002 | 1 | նվիրատվություն | սարքին |
| 83. | Տպիչ | 2002 | 1 | նվիրատվություն | անսարք |
| 84. | Հեռախոս ՁՏԵ | 2007 | 1 | 18000 | սարքին |
| 85. | Բազկաթոռ | 2008 | 1 | 30000 | բավարար |
| 86. | Սեղան | 2008 | 1 | 60000 | բավարար |
| 87. | Աթոռ | 2008 | 6 | 32000 | բավարար |
| 88. | Պահարան | 2008 | 1 | 78000 | բավարար |
| 89. | Համակարգիչ | 2010 | 1 | 317000 | սարքին |
| 90. | Տպիչ | 2010 | 1 | 48000 | սարքին |
| 91. | Ցուցատախտակ | 2010 | 1 | 36000 | լավ |
| 92. | Համակարգիչ | 2011 | 1 | 290000 | սարքին |
| 93. | Տպիչ | 2011 | 1 | 82000 | սարքին |
| 94. | Սեղան | 2011 | 1 | 150000 | լավ |
| 95. | Աթոռ | 2011 | 6 | 72000 | լավ |
| 96. | Համակարգիչ | 2012 | 1 | 330000 | գերազանց |
| 97. | Ճանապարհային տեսախցիկ | 2014 | 2 | 440000 | գերազանց |
| 98. | Ավտոմեքենա KIA | 2014 | 1 | 3960000 | լավ |
| 99. | Հակակարկտային կայան «Զենիթ-100» | 2014 | 1 | 4100000 | գերազանց |
| 100. | Բազկաթոռ | 2014 | 1 | 75000 | գերազանց |
| 101. | Մահճակալ մեկհարկանի | 2014 | 50 | նվիրատվություն | գերազանց |
| 102. | Խաղալիքի պահարան | 2014 | 4 | նվիրատվություն | գերազանց |
| 103. | Զգեստապահարան 5 տեղանոց | 2014 | 6 | նվիրատվություն | գերազանց |
| 104. | Մանկական սեղան | 2014 | 14 | նվիրատվություն | գերազանց |
| 105. | Մանկական աթոռ | 2014 | 50 | նվիրատվություն | գերազանց |
| 106. | Տնօրենի սեղան | 2014 | 1 | նվիրատվություն | գերազանց |
| 107. | Գրասեղան | 2014 | 2 | նվիրատվություն | գերազանց |
| 108. | Աթոռ | 2014 | 5 | նվիրատվություն | գերազանց |
| 109. | Գրապահարան | 2014 | 1 | նվիրատվություն | գերազանց |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական գյուղ Հայկավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 29-Ն

«4» դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի 2014թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ ------------------- կողմ

Սպարտակ Եդոյան՝------------------- կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝--------------- կողմ

Սամվել Բաղդասարյան՝-------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս.Մխոյան

«4» դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հայկավանի համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 29-Ն որոշման

## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

Ընդամենը եկամուտներ- 31322.8 հազար դրամ

Հարկեր և տուրքեր –7921.1 հազար դրամ
Գույքային հարկեր անշարժ գույքից- 5727.8 հազար դրամ,այդ թվում՝
-գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար- 0.9 հազար դրամ
-հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար – 5726.9 հազար դրամ
Գույքահարկ փոխադրամիջոցների համար -2143.3 հազար դրամ
Տեղական տուրքեր- 50.0 հազար դրամ
Դոտացիա- 21900.2 հազար դրամ
Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ- 1451.5 հազար դրամ
Այլ գույքի վարձակալությունից մուտքեր- 40.0 հազար դրամ
Տեղական վճարներ- 10.0 հազար դրամ

## ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

Ընդամենը ծախսեր- 31322.8 հազար դրամ

Վարչական մաս- 31322.8 հազար դրամ

Աշխատանքի վարձատրություն- 16955.3 հազար դրամ
-աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ- 15620.4 հազար դրամ
-պարգևատրումներ,դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ- 1334.9հազար դրամ
Էներգետիկ ծառայություններ- 1800.0 հազար դրամ
Կապի ծառայություններ- 320.0 հազար դրամ
Ապահովագրական ծախսեր-80.0 հազար դրամ
Համակարգչային ծառայություններ-150.0հազար դրամ
Տեղեկատվական ծառայություններ- 200.0հազար դրամ
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ- 900.0 հազար դրամ
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում - 900.0 հազար դրամ
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում -500.0 հազար դրամ
Գրասենյակային նյութեր-120.0 հազար դրամ
Տրանսպորտային նյութեր- 400.0 հազար դրա
Հատուկ նպատակային այլ նյութեր- 1000.0 հազար դրամ
Ընթացիկ դրամաշնորհներ- 400.0 հազար դրամ
Սոցիալական օգնություն- 1600.0 հազար դրամ
Պահուստային միջոցներ- 6357.5հազար դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Մխոյան

«4» դեկտեմբերի 2014 թվական գյուղ Հայկավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 30

« 4 » դեկտեմբերի 2014 թվական գյուղ Հայկավան

## ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՈՒՐԱԽ ՏՈՆԱԾԱՌ » ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏՈՄՍԵՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի 2014 թվականի բյուջեի 4269 հոդվածից հատկացնել 380.0 հազար (երեք հարյուր ութսուն հազար )դրամ ,որից 100.0հազար (մեկ հարյուր հազար) դրամ՝համայնքային «Ուրախ տոնածառ» կազմակերպելու և 280.0հազար (երկու հարյուր ութսուն հազար) դրամ՝ «Հայկավանի միջնակարգ դպրոց»Պետական ոչ առևտրային կազմակերպության կրտսեր դպրոցականներին նվերներ ու ներկայացման տոմսեր գնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ ------------------- կողմ
Սպարտակ Եդոյան՝------------------- կողմ
Անդրանիկ Մարտիրոսյան՝----------------- կողմ
Սամվել Բաղդասարյան՝--------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական գյուղ Հայկավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 31-Ն

« 4 » դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով՝Հայկավանի համայքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի՝« Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 30-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Եկամուտների գծով- «27973.6 հազար դրամ » թիվը փոխարինել «29460.6 հազար դրամ» թվով

պետական բյուջեից տրամադրվող կապիտալ սուբվենցիաներ «0 դրամ»թիվը փոխարինել«1487.0 հազար դրամ» թվով

Ծախսերի գծով - «44448.6 հազար դրամ» թիվը փոխարինել «45935.6 հազար դրամ » թվով, այդ թվում ֆոնդային մասի «16475.0հազար դրամ» թիվը փոխարինել «17962.0 հազար դրամ » թվով

Ծախսերի գծով ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

ընդհանուր բնույթի հանրային ծառայություն « 36165.0 հազար դրամ » թիվը փոխարինել «37652.0 հազար դրամ » թվով , այդ թվում ֆոնդային մասի «16475.0 հազար դրամ» թիվը փոխարինել «17962.0հազար դրամ» թվով

5122 հոդվածի 1.6.1. – ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ «0 դրամ» թիվը փոխարինել «1487.0 հազար դրամ» թվով:

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4 — Դեմ՝ 0 — Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ -------------------- կողմ

Սպարտակ Եդոյան՝-------------------- կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝---------------- կողմ

Սամվել Բաղդասարյան՝--------------------կողմ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Հայկավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 32

«4» դեկտեմբերի 2014 թվական                                         գյուղ Հայկավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5- րդ կետի դրույթներով՝ Հայկավանի համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի բնակիչ Հովհաննես Գասպարյանին համայնքային բյուջեի 4729 հոդվածից հատկացնել 30.0 հազար (երեսուն հազար) դրամ միանվագ դրամական օգնություն :

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 4          Դեմ՝ 0          Ձեռնպահ՝ 0

Մկրտիչ Ավետիսյան՝ -------------------- կողմ

Սպարտակ Եդոյան՝------------------- կողմ

Անդրանիկ Մարտիրոսյան՝----------------- կողմ

Սամվել Բաղդասարյան՝---------------------կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝          Ս.Մխոյան

« 4 » դեկտեմբերի 2014 թվական                                         գյուղ Հայկավան